Կը հրատարակուի ամիս երկու ան-
գամ · միջին եւ վերջն ,
Տարեկան գինն 24 ղրուշ:
Վեցամսեայ 12 ղրուշ:
Մէկ համար — 40 փարայ ·

ԱՐԱՏ ԱՐ

Որ ինչ եւ ուզեն հաղորդագրութիւն
Պարոն Երեմեան նամակները
Խմբագիրը պէտք ճամբէ ·
Լրագրոյ վերաբերեալները
առ խմբագիրը պէտք ուղղուին ·

# ԱՐԾՈՒԻԿ ՏԱՐՕՆՈՅ

ԹՌՈՒՑԵԱԼ ԹԵՒՕՔ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՈՅՆ
Ի ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՅԻՆՆԱԿՆԵԱՆ ԼԵՌԱՆՑ
Ի ՎԱՆԱՑ Ս· ԿԱՐԱՊԵՏԻ ՀՐԱՇԱԼԻ ՈՒԽՏԷՆ ·

Ա· ՏԱՐԻ · ԹԻՒ 14   1863 ·   ՀՈԿՏԵՄԲԵՐ 15

## ԹՌՉՈՒՆՔ ԸՆՏԱՆԻՔ

Գիշերմը ի Մշոյ դաշտ ·

Ընդհուպ յունիս ամսուն էր · մինչ Մշոյ Դաշտի գեղերէն շատ մարդիկ եւ շատ ընտանիք ելան իրենց Հայրենի գեղեր ու տները թողուլ, եւ գիւղէ կարաւանի նման չարան չարան խուռն եկեր էր գաղթեցան, ու կը գաղթէին անկից ին. գնալով Բասենու եւ Դերջանու կողմերը ·

Այն գաղթականաց անտառանը եւ իրենց քաշած կեանքը նկարագրելն մեզ դժուար է, միայն շատուններ հետեւեալ մանրամաս բայց օրուան հոր առնելով , որ գիտեան հա-զիւ գրուած է հայրենասիրութիւն գրչին ·

"Օ՜գ ու բարութիւն գեղացիք ամէնք իրենց վերջին վճիռը կարած էին · իրիկուն լուսնակը լուսով բարձին միասնեղ եւ սկսան ցաւելով ու խուռն սիրտ տալով շարժել իրենց տուները, մինչեւ գեղի մարգներն ու կալատեղիները անցան , ամէնքը միասին դարձան մի դառն եւ խեղճ հայեցուածք ձգեցին վեր իրենց տան եւ դաշտին ·

"Երկու մանկամարդ եւ անմարդ կիներ՝ երկու քաշուած ունէին հետերնին , մէյ մէկը գրկեր էին , մէյ մէկ ալ կ՚քաշեցէին ձեռքերնէն բռնած · կարաւանը յառաջացաւ · յուշիկ յուշիկ յետս մնացին · գրկածան տղայոց ակսան լալ · ու մէկ կողմէն կ՚ընկղմէին այն · տախտակեան թշուառ նաւերը իրենց աղայոց գործաւորաց ձայնել · Ղըստեցան քարինը վրայ · քանի՛ տղայք կու լային · սրերու սիրտը կը կոտրէր · մէկ կողմէն կը քնանային · բայց կարաւանը կանգնէր ; բըրդերէն ալ խիստ երկիւղ կար այն միջոցներ· Այս երկու կնիկներէ էին Շողէր եւ Գոհար · առաջինը այրի էր , իսկ երկրորդի էրիկը՝ զուրթերը պանդխտութեան գնացեր էր ·

"Այս վայրկենիս մեջ երկուք հաւատարմոյին հառաչանքները քաշեցին · տղաքները կու լային , եւ Շողերն սկսաւ հեծեծեալ ողբասացէ լալոյ քը լալ ·

Կարաւանը անցաւ , հաւատոր մեր հալին ·
Արարիչ Աստուած , հասիր մեր յաւտին ·
Լուծեցեր հանդարտանք · երբ մեր ինչ վախտի ·
Արարիչ քու աջ մեզ պատեկ եղնի · քո խաչ հովանի ·

Ահ , նը էրիկ ունիմ , նը պապ , ու նը մամ ·
Նը տոպէր , նը քեռի , նը հասած տղայ , ու նը բարեկամ ·
Դըման Աստուած , էս մանտրիկ ձագերը քու պահպանին ·
Լանց ատապէն մեզի խնայէ ·

Անոնց նստած տեղը մեծ փայտեր կար · որուն վրայ Արագիլ բոյնը դրեր էր · էս վայրկենիս որ Շողերը կու լար · Արագիլ կընեցաւ բունին մէջ · Թեւերը թափ տուաւ ու ձագերուն հետ մէկ տեղ կկկկաց · Գո-

հարի տղան գրքի մէջ քնած էր, արթնցաւ յանկարծ ու ասաց. Մամիկ, պատառ մի հա՛ց ։

Ա՜հ Աստուած Աստուած. Գոհարը լացաւ.
Ահ լաւօ լաւօ, իր որդւոյն դարձաւ։
Հօգցա յինչ տեղից. բըզ հացիկ ճարեմ.
Մէրիկդ թաղես. վա՜յ անօթի՞ ես . . . ։

Երգիլ, հօրին զթեւերդ թափ տուիր.
Հօրին զիմ Մոսոն քնից զարթ տուիր.
Որդիւ, քու ձայներ կուշտ են ու հանգիստ.
Մոսոն հա՛ց կուզէ. չկա՜յ . . .
Կը քաղուի հոգիս ։
Մ՛ի լար Մոսօ, քուն եղիր լաւօ.
Դըրա գիշեր մութնէ. քընիր, առաւօտուն ։
Օ՜րոօ. հերիք մեզ թողնես մահրում.
Հերիք քաշես զէդ ղարիպութիւն.
Քու օլուղ չօճուղ հէտիրից խեղճ են.
Նա՛ ինչ դառն օր այ մեռնելու խեչ են.
Օ՜քեզի կ կանչեն ։

Աստղին լոյսին. լոյսին աստղին այս երկու դժբաղդները. բաւական ժամանակ մնացին, մինչեւ իրենց տաք արցունքները աղօթ երեսներու վրայ կաթեցին ու արթնցուցին. վերջապէս վեր կացին երեսնին խաչակնքեցին, Աստուած կանչեցին՝ ձեռք ձեռքի բռնեցին. սկսան քալել կոյլաւանի ճանապարհով ։

Լուսնակը բարձրացաւ. եւ իր լուսոյ ճառագայթները ձգեց Մշոյ դաշտի արեւմտեան սեւ սարը. Սուրբ Յովհաննու վանքի գմբէթները մանր ամպերու մէջ գեղեցիկ եւ պարզ կերեւնային. աչքերնին առ հասարակ յափշտակուած այն կողմը. կանգ առին փափկացած սրտով ու լալով աչերով ու խամր արին. ծունկ դրին. եւ Չոլոյի տղան Օհնէն դարձաւ մօր հարցուց թէ՝ ինչ էր այն երեւցածը. Մայրը հազիւ ընկճեալ բերանովը — Սուրբ Յովհաննեան է. ասաց. Օհնէն անմիջապէս կարդաց այս աղօթքը, որ իր մեծ պապ Տէր Օչքարէն ուսուցեր էր եւ ամէն օր կ՚ասէր ։

Սուրբ Յովհաննէս. Սուրբ Յովհաննէս.
Օ խո պահպանես, քո մատաղն եմ ես.
Փորձութիւնից զէս ազատ էնես,
Սուրբ Յովհաննէս, քո մատաղն եմ ես ։

— Դարձու Չոլոյը աղօթեց ։

Ահ, քու զօրաց մեռնիմ քու հրաշքին,
Սեւմուտ քեզ ընք տուեր մեր քաղցն ու հոգին.
Սուրբ Յոհաննէս, մենք կերթանք քու երկրէն.
Ահ, մէկլէ՞րբ տեսանք քո զօրութեն.
Քո հրաշքին մեռնիմ քո զօրութեն.
Տօր կերթանք, վեր դռներ կ խարտինք,
Քո հրաշքին կ՚աղօտենք քո զօրութեն ։

Գիշերը կ՚անցնէր, կարաւանը յառաջացեր էր. լռութիւն միայնութիւն պատեր էր երկիրը, ու այս թշուառ ուղեւորներ գաւառի սրտի եւ երկնային հոգւով կու գնային. Լուսինը բարձրացաւ. բնութիւնը զովացաւ. Մոսօն եւ Օհնէն զուարթացան բնութեան ազդեցութեննէն ու կայտառելով մօրերուն առջեւէն կ՚երթային. յանկարծ՝ թռչկեցաւ, ասաց Մոսոն Օհնէն ալ ասաց՝ ա՜հ շատ անօթի եմ, հօգցա քիչմը գաղըին եղնէր ուտէինք. Աղին ու քալեցին. շատ չանցաւ ճանապարհէն դուրս խոտորեցան. եւ անհատ թուփերու մէջ ինկան. տեսան որ գաղըին գաղըին նոր ու կակուղ իջերէր յերկնից. ժողվեցին եւ կուշտ կուշտ կերան. մինչեւ մայրերը ետեւնէն հասան. գիշ այն տեղ քիչ մը ու հանգստացան. տղաք թուլցեր էին կուզէին քնել. բայց ծնողքը փախնելով չթողուցին, դարձեալ սկսան քալել. ամբողջ ճանապարհը այն չէր. Չատ տարակուսեցան. շատ վախեցան եւ յուսահատեցան. մանաւանդ երբ իրենց միայնութիւնը ու բարբարոսաց բնութիւնը կ՚յիշէին կըդողէին. ու այս կողմ այն կողմ կ՚թափառէին. Լեռնոտի ալիքներուն խոխոջիւնը հասաւ իրենց ականջին. իմացան թէ Մուրատին մերձ են. ու քիչմի սիրտ առին, սիրտ մի ալ նորէն առին, երբ շատ մարդկանց ձայները բայց ծանօթ իրենց ականջին հնչեց. իմացան որ կարաւանը այն տեղերն երեւցի էս երեւոյ թափեր էին. վասն զի այն օրեր Մուրդաղոյ կամուրջը քակուեր էր. եւ կարաւանը փոխցեր էր գիշերով ջուրէն անցնիլ. բայց ասոնք չգտան զկարաւանը. միայն ձայնը լսեցին ։

( Շարունակութիւն ) ։

## Զանազան տեղեկութիւնք.

—Կ'ըսէ Երծուիկ, կարօտն Վանեցիք.
Այս ձայնը շարժեց զմեր մեծերը. փառքի անձկող եւ անծօթուք վանահօր նոր մէջ... որ ... վարդապետ կ'ըղձէին Կարմրուոր Ս. Աստուածածնայ վանուց.

«Բողոքականք Յիսուսեան մանկուան դպրոց հաստած վարժարան, Նոյնպէս բարեկարգելին. Նոր հրահանգարանք եւ նոր դասատուներ կարգեցին».

Կը գրեն նաեւ թէ Վանայ աշխատանեաց Յովհաննեան Ս. Մոկացեան վարժարան բարեաց խնամակալութեամբ կ'վարուի եւ կ'յառաջանայ, շնորհիւ Թերլեմեզեան Ս. Երեւանեան եւ համայն ժողովրդականաց. Նոյնպէս եւ Ս. Յակոբեան Ս. Գրական վարժարանը շնորհիւ Արտաշէսեանց Վարդան աղային եւ հասարակութեան. Իսկ Տիրակատարց վարժարանը առաւել եւս զօրեղ բարեկարգութեան մէջ մտած է յառաջ հոգաբարձութեամբ եւ խնամակալութեամբ Ս. Շողակն Պէյին».

Կը բախտաւորինք այս լուրերով եւ սրտով կ'ձօնեմք միշտ Երախտաւոր անձանց. որք իրենց պարտքը կ'հասուցանեն միանգամայն եւ անմահ երախտաց փառքը կ'վաստկեն.

Կը լսենք նաեւ Վանայ մէջ Երզնկայ համար այլ նոր ուսումնարան մը բանալ. —Տայ Աստուած.

Ըմբռնեցէք, ո՛վ իմ ազնիւ Հայրենակիցք Վասպուրականի Հայկազունք. Աչաց է մարդկային երջանկութեան աղբիւրներ... ուսում մը ... յառաջադիմութիւն, որոց որդիք երջանկութեան պտուղ ծնանին մեր սիրելի Թշուառ Հայրենեաց.

Որէ՞ս անհնարին եւ տխուր համբաւն այլ կ'հասնին մեզ Մշոյ անէն, որոյ թէ տաքթ թէ գիւղը եւ թէ Աշտիշատու հետեւանքը յանձն չեմք տանիր հրատարակել. զաւ ժկան կոտորել եւ մեր աւեր ի սիրտ Ըսդաւեր ընթերցողաց. Հոգւոյ չափ ցաւելով եւ աղօթելով առ Աստուած, որ

խնայէ Աստուած կենդանի կրօնի կամ ազգութեան եւ ցրէ այն խաւարը միանգամայն եւ գործը իր անսասան եւ ամենազօր շնչով հաստատելով իւր խաղաղութիւնը նոցա մէջ.

---

Այժմ ինչ երկու համար տուեցանք, Մեկին ուշքի պարծանք, մէկին ամօթանք.

Ա. —Ամենապատուութեան գործակիր ժողովոյ ձեռօք ընտրական նոր ժողով մի եւս կազմուած է նախագահութեամբ Տ. Յակոբ խաչակիր ... քահանային, եւ որոց ձեռօք ընտրելոց ցուցակը պատրաստուեր է. որոնք հասարակաց քուէարկութեամբ պիտի ընտրուին Թաղական խորհրդոյ անդամ. Ու այս Գիր. Արքազան Ըսաչնորդը ազգու տանուտերութիւն առած է. ցոյց տալով ընտրելի անձանց յատկութիւններ եւ պարտաւորութիւնները.

Բ. —Կարնոյ միջամտէմ Կէս գիւղի Տ. Պօղոս ազգին տուեալ եւ հնարիւք իւր հօրը հրաշագործութեան անունը հաներ է, իբր թէ զօրութեամբ ջուր կ'բղխեցունէ եւ կ'բժշկէ շատ բայց եւ ոչ մէկ մխտածէ. շուտով այս համբաւ տարածուեր է հասարակութեան մէջը, ու միամիտները փութացին ... եւ ... ազգեան Բագրատ Ս. Ըսաչնորդը լսելով իսկոյն քննեց եւ հասկցեր է այս անօրէն խարդախութիւնը եւ ազգանուարահարքը կեղծաւորութիւնը. Զոր վաղվաղակի փութացեր խափանել, քարոզելով եւ գիր գրելով թէ քաղաքին եւ թէ գիւղին մէջ ... նման շատը աւելորդ աղքատութեանց համար, ցոյց տալով թէ ինչպէս ... նախապաշարմունք և ամօթանք են մարդկութեան մէջ. Եւ մեղք ու դատապարտութիւն է Աստուծոյ առջեւ.

---

Խմբագիր Տարօնոյ Արծուիկի
Գ. Սրուանձտեանց, Ձեռամբ Մ. Արծրունի.

Ի Տպարանի Վ. Արծուոյն ի Տարօն.